ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

12 հոկտեմբերի 2012թ. թիվ 494

Վ. ՉԱԼԱԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով Վ.Չալաբյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վալիկո Չալաբյանին տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը ս/թ հոկտեմբերի 15-ից 26-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր:

2. Վ.Չալաբյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժական գծով տեղակալ Ալլա Մկրտչյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 12
ք.Վանաձոր